8/15

# ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N << *ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/78*>>

ք. Երևան << 21 >> << ապրիլի >> 2017 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ. Չթրյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Արհովշին>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Գրիգորյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Արաբկիր վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի ներքին կոյուղագծերի կառուցման և վերանորոգման աշխատանքները** (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են << օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի Տեխնիկական բնութագիր ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ մինչև **<<2017թ սեպտեմբերի 30-ը>>**

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

## 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ << օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ **նախագծին, Տեխնիկական բնութագիր և ծավալաթերթին** համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության (Հավելված N 4) ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 20 օրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կարգով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:

4.7 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **3145935.0 (երեք միլիոն հարյուր քառասունհինգ հազար ինն հարյուր երեսունհինգ)** ՀՀ դրամ, որից **524323.0 (հինգ հարյուր քսանչորս հազար երեք հարյուր քսաներեք)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25 դեկտեմբերի 2017 թ. ՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է **երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:**

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ

հոդվածի համաձայն, ուղարկում է Կապալառուի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում **է www.gnumner.am հասցեով** ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

*8.*.14 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում **Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:**

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պատվիրատու**
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900032000102
ՀՎՀՀ 02593108

Գ. Չթրյան----------
(Ստորագրություն)
Կ.Տ

**Կապալառու**
«Արհովշին» ՍՊԸ
ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղամաս, 17/1շենք. Բն 14
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510037693960100
ՀՎՀՀ 00110978

Ա. Գրիգորյան----------
(Ստորագրություն)
Կ.Տ

*Հավելված թիվ 1*
*<< 21 >> ապրիլի 2017թ.*
*կնքված աշխատանքների կատարման*
թիվ << ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/78>> գնման պայմանագրի

## ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

| Ք.Երևանի Արաբկիր վարչական շրջանի Աղոնց փողոցի թիվ 17 շենքի ջրագծերի և կոյուղագծերի ներքին ցանցի կառուցում և վերանորոգում | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |
| հ/հ | Հիմնա-վորում | Աշխատանքների անվանումը | Չափի միավոր | Քանակ | Միավորի ընդ.արժ հազ.դրամ | Ընդհանուր արժեքը հազ. դրամ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | 19-3 | Պողպատե խողովակների ապամոնտաժում Φ76մմ | գծմ | 59.0000 | 0.8025 | 47.3475 |
| 2 | 19-1 | Պողպատե խողովակների ապամոնտաժում Φ32մմ | գծմ | 48.0000 | 0.3517 | 16.8816 |
| 3 | 16-56 | Պողպատե Φ76*3մմ խողովակների մոնտաժում | գծմ | 59.0000 | 3.1557 | 186.1863 |
| 4 | 16-37 | Պողպատե Φ32*2.5մմ խողովակների մոնտաժում | գծմ | 48.0000 | 1.1746 | 56.3808 |
| 5 | 16-112 | Սողնակի մոնտաժում Φ76 կցաշուրթով | հատ | 2.0000 | 45.4767 | 90.9534 |
| 6 | 16-102 | Φ76 կցաշուրթ | հատ | 4.0000 | 8.1133 | 32.4532 |
| 7 | 16-134 | Φ32 փականների մոնտաժում | հատ | 8.0000 | 6.8978 | 55.1824 |
| 8 | 46-167<br>46-183<br>k=30 | Φ100մմ տրամագծով ացքերի շաղափում 40սմ հաստության պատերի մեջ | տեղ | 2.0000 | 2.6684 | 5.3368 |
| 9 | 23-134 | Անցքերի փակում B15 բետոնով | $մ^3$ | 0.0100 | 119.2927 | 1.1929 |
| 10 | 14-398 | Խողովակների երկտակ յուղաներկում | $մ^2$ | 20.5000 | 1.1380 | 23.3290 |
| 11 | 22-33 | Խողովակների ջերմամեկուսացում հանքաբամբակով | $մ^3$ | 0.8500 | 35.9815 | 30.5843 |
| 12 | 16-219 | Համակարգի փորձարկում | գծմ | 111.0000 | 0.0796 | 8.8356 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 13 | 22-313 | Համակարգի ախտահանում, լվացում | գծմ | 111.0000 | 0.0739 | 8.2029 |
| 14 | 16-212 | Միացում առկա ջրագծին | տեղ | 1.0000 | 11.1625 | 11.1625 |
| 15 | 16-208 | Փ32 խողովակի միացում Փ76 խողովակին | տեղ | 8.0000 | 6.9545 | 55.6360 |
| 16 | 22-362 | Պողպատե ձևավոր մասեր | կգ | 16.0000 | 1.4073 | 22.5168 |
| 17 | 23-77 | Շին աղբի հավաքում | տ | 1.5000 | 1.6793 | 2.5190 |
| 18 | 23-229 գնաց. | Շին աղբի բարձում և տեղափոխում 12 կմ հեռ.վրա | տ | 1.5000 | 2.9994 | 4.4991 |
| | | Ընդամենը | | | | 659.2000 |
| | | Շահույթ % | | | | 32.9600 |
| | | Ընդամենը | | | | 692.16000 |
| | | ԱԱՀ 20% | | | | 138.43200 |
| | | Ընդամենը | | | | 830.59200 |

## ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

### Ք.Երևանի Արաբկիր վարչական շրջանի Ադոնց փողոցի թիվ 17/1 շենքի ջրագծերի և կոյուղագծերի ներքին ցանցի կառուցում և վերանորոգում

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |
| h/h | Հիմնա-վորում | Աշխատանքների անվանումը | Չափի միավոր | Քանակ | Միավորի ընդ.արժ հազ.դրամ | Ընդհանուր արժեքը հազ. դրամ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | | |
| 1 | 19-3 | Պողպատե խողովակների ապամոնտաժում Փ76մմ | գծմ | 55.0000 | 0.8025 | 44.1375 |
| 2 | 19-1 | Պողպատե խողովակների ապամոնտաժում Փ32մմ | գծմ | 46.0000 | 0.3517 | 16.1782 |
| 3 | 16-56 | Պողպատե Փ76*3մմ խողովակների մոնտաժում | գծմ | 55.0000 | 3.1556 | 173.5580 |
| 4 | 16-37 | Պողպատե Փ32*2.5մմ խողովակների մոնտաժում | գծմ | 46.0000 | 1.1746 | 54.0316 |
| 5 | 16-112 | Սողնակի մոնտաժում Փ76 կցաշուրթով | հատ | 2.0000 | 45.4755 | 90.9510 |
| 6 | 16-102 | Փ76 կցաշուրթ | հատ | 4.0000 | 8.1131 | 32.4524 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 7 | 16-134 | Φ32 փականների մոնտաժում | հատ | 8.0000 | 6.8977 | 55.1816 |
| 8 | 46-167<br>46-183<br>k=30 | Φ100մմ տրամագծով ացքերի շաղափում 40սմ հաստության պատերի մեջ | տեղ | 2.0000 | 2.6684 | 5.3368 |
| 9 | 23-134 | Անցքերի փակում B15 բետոնով | մ³ | 0.0100 | 119.2895 | 1.1929 |
| 10 | 14-398 | Խողովակների երկտակ | մ² | 20.5000 | 1.1380 | 23.3290 |
| 11 | 22-33 | Խողովակների ջերմամեկուսացում հանքաբամբակով | մ³ | 0.8500 | 35.9796 | 30.5827 |
| 12 | 16-219 | Համակարգի փորձարկում | գծմ | 101.0000 | 0.0796 | 8.0396 |
| 13 | 22-313 | Համակարգի ախտահանում, լվացում | գծմ | 101.0000 | 0.0739 | 7.4639 |
| 14 | 16-212 | Միացում առկա ջրագծին | տեղ | 1.0000 | 11.1620 | 11.1620 |
| 15 | 16-208 | Φ32 խողովակի միացում Φ76 խողովակին | տեղ | 8.0000 | 6.9543 | 55.6344 |
| 16 | 22-362 | Պողպատե ձևավոր մասեր | կգ | 15.0000 | 1.4073 | 21.1095 |
| 17 | 23-77 | Շին աղբի հավաքում | տ | 1.5000 | 1.6827 | 2.5241 |
| 18 | 23-229<br>գնաց. | Շին աղբի բարձում և տեղափոխում 12 կմ հեռ.վրա | տ | 1.5000 | 2.9993 | 4.4990 |
| | | Ընդամենը | | | | 637.3640 |
| | | Շահույթ % | | | | 31.8690 |
| | | Ընդամենը | | | | 669.2330 |
| | | ԱԱՀ 20% | | | | 133.8470 |
| | | Ընդամենը | | | | 803.0800 |

**ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ**

Ք.Երևանի Արաբկիր վարչական շրջանի Ավետիսյան փողոցի թիվ 67 շենքի ջրագծերի և կոյուղագծերի ներքին ցանցի կառուցում և վերանորոգում

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |
| հ/հ | Հիմնա-վորում | Աշխատանքների անվանումը | Չափի միավոր | Քանակ | Միավորի ընդ.արժ հազ.դրամ | Ընդհանուր արժեքը հազ. դրամ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 19-3 | Պողպատե խողովակների ապամոնտաժում Φ76մմ | գծմ | 65.0000 | 0.8025 | 52.1625 |
| 2 | 19-1 | Պողպատե խողովակների ապամոնտաժում Φ25մմ | գծմ | 64.0000 | 0.3517 | 22.5088 |
| 3 | 16-56 | Պողպատե Φ76*3մմ խողովակների մոնտաժում | գծմ | 65.0000 | 3.1557 | 205.1205 |
| 4 | 16-37 | Պողպատե Φ25*2.5մմ խողովակների մոնտաժում | գծմ | 64.0000 | 1.0112 | 64.7168 |
| 5 | 16-112 | Սողնակի մոնտաժում Φ76 կցաշուրթով | հատ | 1.0000 | 45.4761 | 45.4761 |
| 6 | 16-102 | Φ76 կցաշուրթ | հատ | 2.0000 | 8.1132 | 16.2264 |
| 7 | 16-134 | Φ25 փականների մոնտաժում | հատ | 11.0000 | 4.7260 | 51.9860 |
| 8 | 46-167<br>46-183<br>k=30 | Φ100մմ տրամագծով ացքերի շաղափում 50սմ հաստության պատերի մեջ | տեղ | 3.0000 | 2.6684 | 8.0052 |
| 9 | 23-134 | Անցքերի փակում B15 բետոնով | մ³ | 0.0200 | 119.2475 | 2.3850 |
| 10 | 14-398 | Խողովակների երկտակ յուղաներկում | մ² | 20.0000 | 1.1380 | 22.7600 |
| 11 | 22-33 | Խողովակների ջերմամեկուսացում հանքաբամբակով | մ³ | 0.8500 | 35.9810 | 30.5839 |
| 12 | 16-219 | Համակարգի փորձարկում | գծմ | 129.0000 | 0.0796 | 10.2684 |
| 13 | 22-313 | Համակարգի ախտահանում, լվացում | գծմ | 129.0000 | 0.0739 | 9.5331 |
| 14 | 16-212 | Միացում առկա ջրագծին | տեղ | 1.0000 | 11.1522 | 11.1522 |
| 15 | 16-208 | Φ25 խողովակի միացում Φ76 խողովակին | տեղ | 11.0000 | 6.9544 | 76.4984 |
| 16 | 22-362 | Պողպատե ձևավոր մասեր | կգ | 16.0000 | 1.4073 | 22.5168 |
| 17 | 23-77 | Շին աղբի հավաքում | տ | 1.5000 | 1.6827 | 2.5241 |
| 18 | 23-229<br>գնաց. | Շին աղբի բարձում և տեղափոխում 12 կմ հեռ.վրա | տ | 1.5000 | 2.9993 | 4.4990 |
| | | Ընդամենը | | | | 658.923 |
| | | Շահույթ % | | | | 32.946 |
| | | Ընդամենը | | | | 691.869 |
| | | ԱԱՀ 20 % | | | | 138.374 |
| | | Ընդամենը | | | | 830.243 |

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

| Ք.Երևանի Արաբկիր վարչական շրջանի Այգեձոր փողոցի թիվ 72 շենքի ջրագծերի և կոյուղագծերի ներքին ցանցի կառուցում և վերանորոգում | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |
| հ/հ | Հիմնա-վորում | Աշխատանքների անվանումը | Չափի միավոր | Քանակ | Միավորի ընդ.արժ հազ.դրամ | Ընդհանուր արժեքը հազ. դրամ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | 19-3 | Պողպատե խողովակների ապամոնտաժում Φ76մմ | գծմ | 46.0000 | 0.8025 | 36.9150 |
| 2 | 19-1 | Պողպատե խողովակների ապամոնտաժում Φ32մմ | գծմ | 48.0000 | 0.3517 | 16.8816 |
| 3 | 16-56 | Պողպատե Φ76*3մմ խողովակների մոնտաժում | գծմ | 46.0000 | 3.1557 | 145.1622 |
| 4 | 16-37 | Պողպատե Φ32*2.5մմ խողովակների մոնտաժում | գծմ | 48.0000 | 1.1746 | 56.3808 |
| 5 | 16-112 | Սողնակի մոնտաժում Φ76 կցաշուրթով | հատ | 1.0000 | 45.4762 | 45.4762 |
| 6 | 16-102 | Φ76 կցաշուրթ | հատ | 2.0000 | 8.1132 | 16.2264 |
| 7 | 16-134 | Φ32 փականների մոնտաժում | հատ | 8.0000 | 6.8977 | 55.1816 |
| 8 | 46-167<br>46-183<br>k=30 | Φ100մմ տրամագծով ացքերի շաղափում 40սմ հաստության պատերի մեջ | տեղ | 3.0000 | 2.6684 | 8.0052 |
| 9 | 23-134 | Անցքերի փակում B15 բետոնով | մ³ | 0.0200 | 119.291 | 2.3858 |
| 10 | 14-398 | Խողովակների երկտակ յուղաներկում | մ² | 19.0000 | 1.138 | 21.6220 |
| 11 | 22-33 | Խողովակների ջերմամեկուսացում հանքաբամբակով | մ³ | 0.8000 | 35.981 | 28.7848 |
| 12 | 16-219 | Համակարգի փորձարկում | գծմ | 94.0000 | 0.0796 | 7.4824 |
| 13 | 22-313 | Համակարգի ախտահանում, լվացում | գծմ | 94.0000 | 0.0739 | 6.9466 |
| 14 | 16-212 | Միացում առկա ջրագծին | տեղ | 1.0000 | 11.1622 | 11.1622 |
| 15 | 16-208 | Φ32 խողովակի միացում Φ76 խողովակին | տեղ | 8.0000 | 6.9544 | 55.6352 |
| 16 | 22-362 | Պողպատե ձևավոր մասեր | կգ | 13.2300 | 1.4073 | 18.6186 |
| 17 | 23-77 | Շին աղբի հավաքում | տ | 1.8000 | 1.6776 | 3.0197 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 18 | 23-229 գնաց. | Շին աղբի բարձում և տեղափոխում 12 կմ հեռ.վրա | տ | 1.8000 | 2.9993 | 5.3987 |
| | | Ընդամենը | | | | 541.2850 |
| | | Շահույթ % | | | | 27.065 |
| | | Ընդամենը | | | | 568.3500 |
| | | ԱԱՀ 20% | | | | 113.6700 |
| | | Ընդամենը | | | | 682.0200 |

1.ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի
ներքին ջրագծերի վերանորոգման աշխատանքների

Գնման առարկա է հանդիսանում Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի ներքին ջրագծերի վերանորոգման աշխատանքները:

Աշխատանքները պետք է իրականացվեն աշխատանքների թերության ակտերով նախատեսված ծավալներին և ձևերին համապատասխան:

ա/ աշխատանքները պետք է սկսվեն հին քայքայված խողովակաշարերի քանդումով

բ/ քանդման ժամանակ տեսակավորել խողովակները և պիտանի խողովակները դասավորել այնպես, որ նորոգման ժամանակ արագ և անվնաս օգտագործվի:

գ/ աշխատանքները սկսել ժամը 8-ից մինչև 18-ը:

1. Մրցույթին մասնակից կազմակերպությունը գնի առաջարկը սահմանելու նպատակով իրավունք ունի նախորոք այցելելու շին հրապարակ:
2. Վերանորոգման աշխատանքները պետք է սկսվեն պայմանագրի հաստատման պահից 2/երկու/ աշխատանքային օրվա ընթացքում:
3. Աշխատանքները իրականցվող բանվորները պետք է ունենան համապատասխան աշխատանքային փորձ, իսկ աշխատանքները իրականցնելու ժամանակ պետք է կրեն հատուկ աշխատանքային վերնազգեստ, պահպանելով անվտանգության կանոնները:

**Պատվիրատու**
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900032000102
ՀՎՀՀ 02593108

Գ. Չթրյան----------
(ստորագրություն)
Կ.Տ

**Կապալառու**
«Արհովշին» ՍՊԸ
ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղամաս, 17/1շենք. Բն 14
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510037693960100
ՀՎՀՀ 00110978

Ա. Գրիգորյան----------
(ստորագրություն)
Կ.Տ

*Հավելված թիվ 2*
*<<21 >> ապրիլի 2017 թ.*
*կնքված աշխատանքների կատարման*
թիվ << ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/78>> գնման պայմանագրի

## ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

**Արաբկիր վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի ներքին կոյուղագծերի կառուցման և վերանորոգման**
**ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Արաբկիր վարչական շրջանի Ադոնց 17 բազմաբնակարան շենքի ներքին կոյուղագծերի կառուցման և վերանորոգման աշխատանքների | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից | 30.09.2017թ |
| 2 | Արաբկիր վարչական շրջանի Ադոնց 17/1 բազմաբնակարան շենքի ներքին կոյուղագծերի կառուցման և վերանորոգման աշխատանքների | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից | 30.09.2017թ |
| 3 | Արաբկիր վարչական շրջանի Ավետիսյան 67 բազմաբնակարան շենքի ներքին կոյուղագծերի կառուցման և վերանորոգման աշխատանքների | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից | 30.09.2017թ |
| 4 | Արաբկիր վարչական շրջանի Այգեձոր 72 բազմաբնակարան շենքի ներքին կոյուղագծերի կառուցման և վերանորոգման աշխատանքների | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից | 30.09.2017թ |

**Պատվիրատու**
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900032000102
ՀՎՀՀ 02593108

Գ. Չթրյան----------
Ստորագրություն՝
Կ.Տ

**Կապալառու**
«Արհովշին» ՍՊԸ
ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղամաս, 17/1շենք. Բն 14
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510037693960100
ՀՎՀՀ 00110978

Ա. Գրիգորյան----------
(ստորագրություն)
Կ.Տ

*Հավելված թիվ 3*
*<< 21 >> ապրիլի 2017 թ.*
*կնքված աշխատանքների կատարման*
թիվ << ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/78>> գնման պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Աշխատանքների անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1 | Արաբկիր վարչական շրջանի Ադոնց 17 բազմաբնակարան շենքի ներքին կոյուղագծերի կառուցման և վերանորոգման աշխատանքների | - | - | - | 448 700 | 448 700 | 448 700 | 746 000 | 746 000 | 746 000 | 830 592 | 830 592 | 830 592 | 830 592 |
| | Արաբկիր վարչական շրջանի Ադոնց 17/1 բազմաբնակարան շենքի ներքին կոյուղագծերի կառուցման և վերանորոգման աշխատանքների | - | - | - | 433 900 | 433 900 | 433 900 | 723 000 | 723 000 | 723 000 | 803 080 | 803 080 | 803 080 | 803 080 |
| | Արաբկիր վարչական շրջանի Ավետիսյան 67 բազմաբնակարան շենքի ներքին կոյուղագծերի կառուցման և վերանորոգման աշխատանքների | - | - | - | 448 900 | 448 900 | 448 900 | 747 000 | 747 000 | 747 000 | 830 243 | 830 243 | 830 243 | 830 243 |
| | Արաբկիր վարչական շրջանի Այգեձոր 72 բազմաբնակարան շենքի ներքին կոյուղագծերի կառուցման և վերանորոգման աշխատանքների | - | - | - | 368 500 | 368 500 | 368 500 | 614 000 | 614 000 | 614 000 | 682 020 | 682 020 | 682 020 | 682 020 |

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով*

**Պատվիրատու**
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900032000102
ՀՎՀՀ 02593108

Գ. Չթրյան----------
Ստորագրություն
Կ.Տ

**Կապալառու**
«Արհովշին» ՍՊԸ
ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղամաս, 17/1շենք. Բն 14
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510037693960100
ՀՎՀՀ 00110978

Ա. Գրիգորյան----------
(ստորագրություն)
Կ.Տ

*Հավելված թիվ 4*
*<<21>> ապրիլի 2017թ.*
*կնքված աշխատանքների կատարման*
*թիվ << ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/78>> գնման պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| _____ | _____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«  » «  » 20  թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
*Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.*

*Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝*

| N | Կատարված աշխատանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքն ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 4.1
<<21>> <<ապրիլի>> 2017թ. կնքված
N *ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/78 ծածկագրով գնման պայմանագրի*

# ԱԿՏ N

**պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ------ -ին կնքված N ----------
(Կապալառուի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/78
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան <<21>> ապրիլի 2017 թ.

<<Արհովշին>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն՝ <<Ա. Գրիգորյանի անձնագիր AK 0555435 տրված 09.07.2010թ. 009-ի կողմից>>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանը (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ **Արաբկիր վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի ներքին կոյուղագծերի կառուցման և վերանորոգման աշխատանքների** ձեռքբերման <<ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/78>>* ծածկագրով բաց գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքված պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

**3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝**

**Կապալառու**
«Արհովշին» ՍՊԸ
ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղամաս, 17/1շենք. Բն 14
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510037693960100
ՀՎՀՀ 00110978

Ա. Գրիգորյան_____
(ստորագրություն)

Կ. Տ

| | |
|---|---|
| 1. | **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐՈ**<br>*(պայմանագրի կատարման ապահովում)* |
| 2. | Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |
| 3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ «Արհովշին» ՍՊԸ | |
| 4. Վճարողի բանկը՝ «Արարատբանկ» ԲԲԸ | |
| 5. Վճարողի հաշվի համարը՝ Հ/Հ 1510037693960100 | |
| 6. Վճարողի ՀՎՀՀ՝ ՀՎՀՀ 00110978 | |
| 7. Վճարողի ՀԾՀ՝ | |
| 8. Շահառու՝ | Երևանի քաղաքապետարան |
| 9. Շահառուի ՀՎՀՀ՝ | 02593108 |
| 10. Շահառուի բանկը՝ | Կենտրոնական գանձապետարան |
| 11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/ | 900015211429 |
| 12.Գումարը թվերով և բառերով՝ 314594.0 /երեք հարյուր տասնչորս հազար հինգ հարյուր իննսունչորս/ | |
| 13.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD | |
| 14.Գործարքի /վճարման/ նպատակը՝ | պայմանագրի կատարման ապահովում |
| 15.Պայմանագրի ծածկագիրը՝ ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/78 | |
| 16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը | 17. կից՝ --- էջ |

| | |
|---|---|
| 19.ա. Շահառուի ստորագրությունները<br>/_____/<br>/_____/<br>19.բ. Կ.Տ. | 18.ա. Վճարողի ստորագրությունները՝<br>Ա. Գրիգորյան /_____/<br>/_____/<br>18.բ. Կ.Տ. |
| Կատարված է շահառուի բանկի կողմից<br>20.ա. /_____/<br>/ստորագրություն/<br>20.բ. Կ.Տ.<br>"___" ___ 20___ թ. | Կատարված է վճարողի բանկի կողմից<br>21.ա. /_____/<br>/ստորագրություն/<br>21.բ. Կ.Տ.<br>22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |